

**ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳՅԱՆ**

Հայ աշխարհագրական գիտությունը ծանր կորուստ կրեց: 2005 թ. դեկտեմբերի 4-ին՝ երկարատև հիվանդությունից հետո, իր մահկանացուն կնքեց ականավոր տնտեսագետ-աշխարհագրագետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Երեմի Ավագյանը:



Գրիգոր Ավագյանը ծնվել է 1928 թ. սեպտեմբերի 23-ին՝ Գրոզնի քաղաքում: 1952 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի աշխարհագրական ֆակուլտետը՝ նա իր ամբողջ գիտակցական կյանքը նվիրել է տնտեսական աշխարհագրության, աշխարհագրության տեսության, Հայաստանի լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների, Լեռնային Ղարաբաղի ուսումնասիրությանը, քարտեզագրությանը:

Ակադեմիկոս Գ. Ավագյանի գրչին են պատկանում շուրջ 40 դիտական ու գիտահանրամատչելի մենագրություններ, այդ թվում՝ դպրոցական և բուհական մեկ տասնյակից ավելի դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ: Նա

հեղինակ է ավելի քան 600 գիտական և հրապարակախոսական հոգվածների, բազմաթիվ քարտեզների: Նրա աշխատությունները լուրջ ներգրծում են աշխարհագրական գիտության ասպարեզում, աչքի են ընկնում իրենց գիտական խորությամբ ու ընդգծված յուրօրինակությամբ:

Գիտական աշխատանքին զուգընթաց Գ. Ավագյանը երկար սարիներ կատարել է մանկավարժական աշխատանք: Բուհն ավարտելուց հետո նա դասավանդել է Երևանի միջնակարգ դպրոցներում, 1958–1961 թթ. ավագ գիտաշխատողի պաշտոն է վարել ՀԽՍՀ մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում, 1962–1972 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի դոցենտ, իսկ 1972–1976 թթ.՝ պրոֆեսոր, վարել Երևանի ժողտնտեսության ինստիտուտի տնտեսական աշխարհագրության ամբիոնը (1976–2000) և լեռնային շրջանների հետազոտության լաբորատորիան (1976–1990): Գ. Ավագյանը 1992-ից մինչև կյանքի վերջը «Պարմանի» ուսանողական համագալին բարեգործական կազմակերպության նախագահն էր:

**Ակադեմիկոս Գ. Ավագյանն** ակտիվորեն մասնակցել է նաև Հայաստանի Հանրապետության Հասարակական-քաղաքական կյանքին: Նա ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր, մեծ նվիրումով իր ողջ եռանդն ու հրապարակախոսական ձիրքը ներգրել մեր նորանկախ պետության կառուցման գործում:

Բոլորին է հայտնի Գ. Ավագյանի գործնականությունը, անմիջականությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը: Նա այգպիսին էլ կմնա իր գործընկերների, նրան ճանաչողների հուշերում:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
ՀՀ կրթության և գիտության նախարարություն  
ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք